ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1594-Ա « 25 » նոյեմբերի 2026թ.

«ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-27/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացված 2027 թվականի կարիքների համար Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի հ. 111 մանկապարտեզի հիմնանորոգման/ սեյսմազինվածության բարձրացման/ և բակի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-27/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Ա. Մաթևոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Հ. Գյուրջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի կառավարման բաժնի պետ
Գ. Ութունջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
Լ. Զաքարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծությունների խմբի ղեկավար
Ա. Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծությունների խմբի մասնագետ

2. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի առաջատար մասնագետ Ս. Հարությունյանին:

3. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ.1, հ.120 սենյակ):

4. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ